ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 36-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹՂԹԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԵՎ «MULBERRY» ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՏԵՍԱՆԵՐԱԾՄԱՆ ԿԱՄ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՈՎ ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԳԱՆԳԱՏԱՐԿՄԱՆ (ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ) ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԴԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԻ, ՎԵՐԱՔՆՆԻՉ ՈՒ ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԹՂԹԱՅԻՆ ՕՐԻՆԱԿՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2024 թվականի հունվարի 18-ի թիվ 12-Լ հրամանի 1-ին հավելվածով սահմանված կարգի պահանջները պատշաճ կատարելու նպատակով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի N 270-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայությունում թղթային եղանակով ստացված և «mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ տեսաներածման կամ այլ եղանակով մուտքագրված վարչական ակտերի գանգատարկման (բողոքարկման) դիմումների, հայցադիմումների, դատական ծանուցումների, վերաքննիչ ու վճռաբեկ բողոքների և

դատական ակտերի թղթային օրինակները պահպանվում են ոչ պակաս, քան երեք ամիս, որից հետո, ըստ անհրաժեշտության, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2024 թվականի հունվարի 18-ի թիվ 12-Լ հրամանով սահմանված կարգով կարող են ոչնչացվել:

2. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Վ. ՂԱԶԱՐՅԱՆ

«29» 03 2024 թ.

ք.Երևան